Ֆ. Ա. Խաչիֆոտովի ներկայությամբ անցկացրած քննություններից հետո Աբովյանի գրած գնկուցագրում կարդում ենք. «Առաջին բաժանմունքում անցել են մաթեմատիկական աշխարհագրություն, առանց մեկնաբանումների, առանց գլորուսի, նույնիսկ առանց քարտեզների։ Երկրորդ բաժանմունքում ի վիճակի չեն քարտեզի վրա գտնագտնել հինգ աշխարհամասերը կամ օվկիանոսները կամ Եվրոպայի քաղաքական բաժանումը»[9]։ Եվ Աբովյանը սկսում է ոչ միայն կանոնավոր օգտագործել ուսումնարանում եղած քարտեզները, այլև անընդհատ հարստացնում է գրադարանը նոր հրատարակված քարտեզներով ու ատլասներով։ Պահպանվել են մի քանի անդորրագրեր և նամակներ՝ Թիֆլիսից, Պետերբուրգից և այլ քաղաքներից քարտեզներ ու ատլասներ դուրս գրելու վերաբերյալ։ Երևանի գավառական ուսումնարանի գրադարանի 1849 թ. գրքերի ցուցակից[10] պարզվում է, որ Աբովյանն իր դասերին օգտագործել է հինգ մեծադիր քարտեզներ և վեց տարբեր ատլասներ։

Աբովյանի վերոհիշյալ գործերը վկայում են Դորպատում նրա ստացած աշխարհագրական, մասնավորապես քարտեզագրական գիտելիքների մասին։ Արևելյան Հայաստանի քարտեզը ցույց է տալիս նաև նրա հասուն հայրենագիտական գիտելիքները։

Աբովյանի՝ առաջին անգամ հրապարակվող այս քարտեզները խոսում են այն մասին, որ մեր մեծ լուսավորիչը գիտեր աշխարհագրական սխեմատիկ քարտեզներ գծագրել և աշխարհագրական ուսումնական գլորուսներ պատրաստել և ծառայեցնել դրանք մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության վեհ նպատակներին։

Ժ. Ի. ԳԱՆԻՆ

ԽԵՑԵՂԵՆԻ ԹՐԹՄԱՆ ՀՆՈՑ ԴՎԻՆԻՑ

Հայաստանի երբեմնի մայրաքաղաք Դվինի միջնաբերդի ստորին հատվածը քաղաքի առավել բնակեցված տեղամասերից է եղել։ Այն ընդգրկել է հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք 450 մետր երկարությամբ և 300 մետր լայնությամբ տարածություն[1]։ Դարավանդաձև կառուցված բնակարաններում, ըստ պատմական տվյալների, ապրել է քաղաքի վերնախավը։ Սակայն վերջին տարիների պեղումների հետևանքով բացված արհեստավորական թաղամասերը վկայում են, որ այստեղ ապրել են նաև արհեստավորներ, որոնք իրենց արտադրանքով բավարարել են տեղի բնակչության առօրյա կարիքները։

Պայմանականորեն նշանակված քառակուսիներում՝ տարածությամբ 7,25×8,50 մետր, 1976 թ. պեղումների ընթացքում բացվեցին բնակարաններ և նրանց կից տնտեսական նշանակություն ունեցող շինություն, որի պատերը շարված են ոչ շատ խոշոր, անկանոն գետաքարերով։ Միջնապատերը քանդված են։ Համեմատաբար լավ է պահպանված արևմտյան հում աղյուսե պատը, որը կցվել է հետագայում, տարածքը լայնացնելու նպատակով։ Այն ուղիղ գծով կապվում է կողքի շինության հետ, որի մուտքն արևմտյան կողմում է[2]։ Ամենայն հավանականությամբ նույն կողմում պետք է լինի ուսումնասիրվող համալիրի մուտքը, քանի որ այստեղով է անցել թաղամասի գլխավոր փողոցը։ Ստորին բերդի այս հատվածի վերին շերտը պեղվել է դեռևս 1952 թ.[3]։

1976 թ. վերսկսված աշխատանքների ընթացքում, նույն տարածքի հաջորդ շերտում, բացվեցին չորս տարբեր տրամագծերի բավակա-

9 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 70, թ. 7։

1 Կ. Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 24։

10 Նույն տեղում, գ. 1733, թ. 16—20։

2 Ա. Ժամկոչյան, Դվինի ստորին բերդի պեղումները (թեզիսներ), Երևան, 1977, էջ 36։

3 1952 թ. դաշտային գրառումներից (դաշտային օրագրերը պահվում են ՀՊՊԹ ֆոնդում) պարզվում է, որ այստեղ բացվել է քառակուսի աղյուսե օջախ և հացատան սյան խարիսխ։ Այժմ այդ վերին շերտից մնացել են միայն 2 քառ. մ մակերես ունեցող, մեկ մետր բարձրությամբ տնտեսական ինչ-որ նպատակի ծառայող սենյակի հետքեր։ Այս շերտի վրա դեռևս պահպանված հում աղյուսե պատերով օջախատիպ քառանկյունի կառույցը, նրա կողքին ձագարանման 36 սմ խորությամբ փոսիկը (որը քարերով շարված և երեսապատված է), ինչպես նաև թրծած աղյուսներով շարված հատակը վկայում են, որ հետագայում էլ տարածքը ծառայել է տնտեսական նպատակի։

նին լավ պահպանված թոնիրներ։ Թոնիրները միշտ էլ, նույնիսկ մեր օրերում, մի առանձին տեղ են գրավում հայկական տներում, ծառայելով տնտեսական, արտադրական խիստ կարևոր նպատակների։ Խեցեղեն թրծելու համար օգտագործել են և այժմ էլ օգտագործում են սովորական թոնիրները։ Հացը թխելուց հետո, քանի որ այն առանց այն էլ տաքացած է, զգուշությամբ շարում են նրա մեջ անոթներն ու թոնրի բերանը ծածկում, որպեսզի օդ չանցնի։ Մի քանի օր հետո անոթները թրծած դուրս են հանում[4]։

Վերը հիշատակված կառույցի մեջ ամենաուշագրավ հայտնագործությունը թոնիրներից ոչ հեռու բացված բրուտագործական հնոցն է (տրամագիծը՝ 120 սմ), որի աղյուսաշար պատը պահպանված է 17 սմ բարձրությամբ։ Հատակն աղյուսապատված է։ Հնոցը լցված էր մոխրով և հում աղյուսի բեկորներով (աղ. I, 1)։

Հատակը մաքրելուց հետո վառարանի արևմտյան պատի մեջ բացվեց կենտրոնական օդամուղ անցքը, որը մեկ մետր երկարությամբ մոտենում է արհեստանոցի պատին և նրա միջով 2 մ երկարությամբ ձգվում դեպի դուրս։ Հնոցի ներսում՝ պատի երկու կողմերով անցնում են աղյուսաշար երկու նեղ մղանցքներ, մոտ 14 սմ լայնությամբ, որոնք միանում են կենտրոնական օդամղիչ անցքին։ Այս մղանցք «առուները» խցանված էին մոխրով։ Վերջիններիս գոյությունը հնոցներում տեխնոլոգիական մեծ կարևորություն է ունեցել։ Հայտնի է, որ թրծման ժամանակ տեղի է ունենում օքսիդացման, չեզոքացման և վերականգնման պրոցես։ Օդը մեծ լիցքով անցնում է հնոցը և բորբոքում կրակը։ Մտնելով եզրային խողովակների մեջ, այն հնարավորություն է ընձեռում ներսում կայուն կրակ ապահովել վառարանի ամբողջ մակերեսի համար։ Եվ, բնականաբար, որքան շատ լինեն օդամղիչ «առուները», այնքան թրծումը հաջող կկատարվի[5]։

Ղրիմում, Հարավային Թուրքմենիայում, Ադրբեջանում, Վրաստանում և այլ միջնադարյան հնավայրերում հայտնաբերված թրծման վառարաններն ունեն նույնատիպ մղանցքներ։ Բնականաբար, որքան մեծ է վառարանը, այնքան շատ են նրա մղանցքները։ Բոլոր այս հնոցները, ունենալով կոնստրուկտիվ նույն կառուցվածքը, միաժամանակ լինում են երեք ձևի՝ քառանկյունի, պայտաձև, կլոր։ Վերջինս ունեցել է վերերկրյա ուղղահայաց երդիկաձևոր տեսք։ Դվինի հարավային թաղամասում 1939 թ. հայտնաբերվել են երեք հնոցներ, որոնք, ըստ Բ. Առաքելյանի, ունեցել են գմբեթավոր ծածկ և երդիկ[7]։

1950 թ. պեղումներից բացված հնոցը (հիմնապատերի հետքերով) իր քառանկյունի հատակագծով և ոչ բոլորակ պատերով Կ. Ղաֆադարյանի կողմից համեմատվում է Ղրիմի Խերսոնեսի և Բուլղարիայի Մադարա գյուղի մոտ բացված հնոցի հետ[8]։ Մեր կարծիքով վերջինս իր կառուցվածքով ավելի քան նման է 1940 թ. Խերսոնեսում բացված XI—XIII դդ. նույնատիպ վառարանին[9]։

Թե՛ հորիզոնական և թե՛ ուղղահայաց վառարաններում ջերմությունն անհավասար է բաշխվել։ Այդ իսկ պատճառով թրծման որակը շատ բանով կախված էր բրուտի հմտությունից։ Նա՛ պետք է վառելիքի ճիշտ ընտրություն կատարեր, խեցեղենը խելացի դասավորեր, իսկ ամենակարևորը՝ վառարանը դանդաղ տաքացներ և նույն ձևով էլ սառեցներ[10] թրծման համար հարկավոր էր մոտ 800 աստիճան ջերմություն)։ Նման հետևությունների կարելի էր հանգել հիմնականում պահպանված գրավոր աղբյուրների, տարբեր երկրների հուշարձանների և ազգագրական բազմաթիվ տվյալների հիման վրա։ Նույն այս տվյալները, ինչպես և մինչև այժմ հայկական շատ շրջաններում (Արտաշատ, Գորիս, Նամշաղին և այլն) գործող թրծման մեծ վառարանները հնարավորություն են ընձեռում վերականգնելու խնդրո առարկա հնոցն իր նախնական ձևով։ Վերջինս իր չափերով ավելի մոտ է և՛ Խերսոնեսի, և՛ Մերվի փոքր տրամագիծ ունեցող միջնադարյան վառարաններին, որոնց տրամագիծը չի անցնում 70, 120 և 95 սմ-ից։ Բոլորի բարձրությունը մոտավորապես հասնում է մինչև 180 սմ-ի։ Խերսոնեսում հայտնաբերված այս չափի վառարանները անվանել են «խոհանոցային»։

Նման վառարաններ մինչև այժմ գործում են նաև Նամշաղինի շրջանում։ Անցյալ դարում կառուցված և մինչև օրս օգտագործվող փոքր

---

4 «Ազգագրական հանդես», Գ գիրք, էջ 22։

5 Տե՛ս Е. И. Сарцаниди, Керамическое производство древнемаргианских поселений, ЮТАКЭ, VII, էջ 334։

6 А. Л. Якобсон, Средневековый Херсонес, МИА, 17, էջ 164։ Н. В. Минкевич-Мустафаева, Раскопки гончарных печей городища Орен-Кала, МИА, 17, էջ 176։

7 Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հատ. I, Երևան, 1958, էջ 217։

8 Կ. Ռ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 235։

9 А. Л. Якобсон, նշվ. աշխ., էջ 94։

10 Э. К. Кверфельдт, Керамика Ближнего Востока, Л., 1947, էջ 18։



Աղյուսակ I

ծավալով այդ վառարաններից մեկը (բարձրությունը՝ 140 սմ, տրամագիծը՝ 150 սմ) նույնպես կարելի է համարել խոհանոցային, քանի որ այստեղ թրծվել են փոքր տարողության անոթներ։ Այս հնոցներն ունեն կլոր հատակադիծ և գմբեթավոր ծածկ։ Այստեղ էլ կրակատեղն առանձնացված է վերին հարկաբաժնից։ Գորիսում այն անվանում են «տակի փոռն» և «վերին փոռն»[11]։ «Որպէս թէ կամարակապք ի ձև հնոցի»[12] հնուց եկած արտահայտությունն էլ տարակույս չի առաջացնում գմբեթավոր վառարանների գոյության մասին։ Դվինից ոչ հեռու գտնվող Յուվա գյուղում գործող թրծման վառարանները գմբեթավոր են և աշխատանքի ընթացքը գրեթե նույնն է, ինչ միջնադարում։ Դվինի վառարանը նույն բոլորակ և գմբեթավոր հնոցների շարքին է պատկանում։ Արհեստանոցի հատակին թափված մեծ քանակությամբ թրծած և հում աղյուսի կտորները հուշում են, որ դրանք իսկապես կարող են ավերված հնոցի

11 Տե՛ս Е. С. Саркисян, Гончарное производство Армении, Ереван, 1978, էջ 67։

12 Տե՛ս ՆՀԲ, հնոց բառը։

գմբեթի մնացորդները լինել։ Հնոցը երկու մասից է բաղկացած եղել։ Ներքևում կրակարանը, իսկ վերին մասը՝ թրծարան։ Բացառված չէ, որ այստեղ անոթները կարող էին թրծվել ամենասովորական ձևով, այսինքն, ուղղակի շարվեին վառված փայտի վրա, ինչպես օջախում։ Սակայն վառարանի բարձրությունը հնարավորություն է տալիս հաստատելու, որ ներքևի մասը վերին բաժնից առանձնացված է եղել հատուկ հարմարանքով, որի վրա և դրվել է թրծվելիք խեցեղենը։ Դրա համար օգտագործվել են կավե ձողեր, որոնք կամ հագցվել են պատի մեջ, կամ ագուցվել վերին մասի հատակին արված փոսիկներում։ Կանթավոր անոթները կախել են, իսկ թասերն ու քրեղանները շարել իրար վրա, անջատելով իրարից կավե եռոտանիներով։ Խեցեղենը շարելուց հետո վառարանը լրիվ փակել են, որպեսզի տաք օդը դուրս չգա։ Բնականաբար, այն կարող էր բացվել միայն թրծման ընթացքն ավարտվելուց հետո։ Շատ դեպքերում գմբեթը մնում էր անձեռնմխելի։ Վառարանի կողքից, որևէ հարմար տեղում անցք էր բացվում իրերը շարելու համար։ Թրծման ընթացքում այն նույնպես փակվում էր[13]։ Շատ դեպքերում անոթները ներս էին մտցնում վերին մասում թողնված բացվածքից։ Վառարանի կառուցման այս սկզբունքը լոկ միջնադարյան ծագում չունի, այն իր արմատներով հասնում է անտիկ և հնագույն շրջանները։ Արտաշատի, Արևմտյան Գերմանիայի, Հռենոսյան, մերձսևծովյան, միջինասիական հնավայրերում բացված վառարանները դրա վկայությունն են[14]։ Չնայած քննարկվող վառարանը դասվում է փոքր, խոհանոցային վառարանների շարքը, սակայն այս տիպի հնոցների փոքրությունը բնավ էլ նրանց պարզունակության չափանիշը չէ։ Բոլոր ժամանակներում բրուտները նպատակահարմար են գտել հնոցները հարմարեցնել իրենց արտադրանքին։ Ոչ մեծ վառարաններում թրծվել է ծավալով փոքր, բայց ավելի մեծ հմտություն պահանջող խեցեղեն և այդտեղ, բնականաբար, ավելի դյուրին է եղել թրծման ընթացքը կարգավորելը[15]։ Հաշվի առնելով այս հանգամանքը, պետք է մտածել, որ Դվինի վառարանը ակներևաբար ծառայել է փոքր անոթներ թրծելու համար։ Այսպիսի վառարանի գոյությունը միջնաբերդում ավելի է պատճառաբանված, քան մեծ հնոցներինը։ Մասսայական արտադրության դեպքում խեցեղենը թրծվել է միջնաբերդից դուրս, քաղաքի բրուտագործական թաղամասում։ Բացառված չէ նաև, որ քաղաքային թաղամասից դեպի արևմուտք ընկած շրջանը նույնպես ունեցել է իր բրուտագործական արհեստանոցները (VII տեղամաս)։ Այստեղից վերջին տարիներին դաշտային աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են մեծ քանակությամբ կավե եռոտանիներ և խոտան խեցեղենի բեկորներ։ Ցավոք, պեղումները ժամանակից շուտ դադարեցվեցին և չհաջողվեց թրծման վառարանը բացել։ Արտադրական թափոնի այդքան մեծ քանակությունը կասկած չի հարուցում հնոցի գոյության մասին։ Իհարկե, թրծման մեծ վառարանները չէին կարող պատկանել մեկ անհատի։ Միջնադարում արհեստավորները բաժանված էին ըստ համքարությունների. բրուտների համքարությունը բավականին մեծ դեր ուներ քաղաքում, չնայած տնայնագործական արհեստը շարունակում էր իր գոյությունը նաև հետագա դարերում։ XIX դարի աղբյուրական նյութերից տեղեկանում ենք, որ գինու կամ ցորենի կարասներ բրուտն առանց նախապես պատվեր ստանալու չէր շինում։ Ուստի, երբ որևէ գյուղ իր սահմաններում լավ կավ և բավականաչափ վառելիք էր ունենում, հրավիրում էր բրուտին իր գործիքներով և պատրաստել էր տալիս հարկավոր կարասները։ Քուրան պատրաստելը, փայտ և կավ հասցնելը գյուղացիների գործն էր։ Գործը վերջացնելուց հետո բրուտը հեռանում էր գյուղից[16]։

Բացառված չէ, որ XVIII—XIX դդ. ապրող բրուտներն այդ սովորությունը վերցրած լինեին իրենց նախորդներից։ Բրուտագործական արհեստը մյուս արհեստների նման ժառանգական էր և նրանում պահված սովորությունները փոխանցվում էին սերնդից սերունդ։ Միաժամանակ վարպետը պարտավոր էր այդ արհեստը սովորեցնել իր աշակերտներին, այն էլ ձրի[17]։ Միայնակ գործող կամ համքարության մեջ ընդգրկված վարպետի կողմից կատարվող աշխատանքը բարդ էր և մեծ հմտություն էր պահանջում։ Բավական էր մի փոքր անուշադրություն, և ամբողջ արտադրանքը կարող էր խոտան դառնալ։ Բրուտներն, իհարկե, իրենք գործի մեծ գիտակներ են եղել։ Սակայն թրծման ընթացքում տեղի ունեցող «կամակորություն-

---

13 А. Л. Якобсон, նշվ. աշխ., էջ 161։

14 Ф. И. Тер-Мартиросян, Античные печи из раскопок Арташата, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1975, նաև В. Ф. Гайдукевич, Античные керамические обжигательные печи, Л., 1934.

15 С. В. Лунина, Техническое устройство гончарных печей средневекового Мерва, ЮТАКЭ, VIII, էջ 356։

16 «Ազգագրական հանդես», Գ գիրք, էջ 44։

17 С. А. Егиазаров, Городские цехи, часть I, Казань, 1891, էջ 147։

ներին» չկարողանալով ճիշտ բացատրություն տալ, շատ հաճախ դիմել են չար կամ բարի ոգիներին, վախեցնելով կամ օգնության կոչելով նրանց[18]։ Այժմ էլ Միջին Ասիայում բրուտագործ կանայք մեծ ծիսակատարությամբ են սկսում խեցեղեն թրծելը։ Այն շինությունը, որտեղ տեղի է ունենալու թրծումը, ծխով է պատվում։ Այս ծուխը կոչվում է բույ (բուրմունք) և կոչված է իր անուշահոտությամբ ոգիներին կաշառելու։ Բրուտագործները հաճախ թաքցնում են իրենց աշխատանքը սկսելու օրերը, որպեսզի չար աչք չկպչի։ Անոթի վատ թրծվելը կամ խոտանվելը նրանք կապում են զանազան սնոտիապաշտական ըմբռնումների հետ[19]։ Հայաստանում էլ շատ շրջաններում թրծումից առաջ խմորի գնդիկներ են գցում թոնրի կամ վառարանի մեջ, որոնք տաքությունից ճաքում են. դա չար աչքը խափանելու հետ է առնչվում։



Աղյուսակ II

Հետաքրքիր է Դվինի վառարանի շրջապատը։ Հնոցից դեպի հարավ բացվեց 150 սմ երկարությամբ աղյուսաշար պատերով, տաշտ հիշեցնող մի փոս, որի լայնությունը արևելյան կողմում 60 սմ է, իսկ արևմտյան մասում՝ 50 սմ։ Այստեղից հայտնաբերվեցին մեծ քանակությամբ հում աղյուսի կտորներ, ինչպես նաև XII դարին բնորոշ կավանոթների բեկորներ։ Վառարանին մոտիկ լինելու հանգամանքը ենթադրել է տալիս, որ այն թերևս օգտագործվել է թրծումից առաջ լրացուցիչ աշխատանքներ կատարելու համար։ Արհեստանոցի հետ է առնչվում դեպի հարավ-արևմուտք ընկած 75 սմ խորությամբ և 3 մ երկարությամբ փոսը։ Այն մի կողմում լցված էր կավով, իսկ մյուս մասում՝ մոխրով։

Վառարանի շրջապատից հայտնաբերվեցին ոչ շատ առատ, սակայն նրա հետ անմիջապես կապվող նյութեր։ Դա ջնարակած անոթներ թրծելու համար օգտագործվող կավե ձողի մի կտոր է, մեկ եռոտանի-հենակ (աղ. I, 4), ջնարակած թասերի մի քանի խոտան բեկորներ, որոնց վրա պահպանված են եռոտանու և թափված ջնարակի հետքեր (աղ. I, 2, 3)։ Վառա-

---

[18] В. Ф. Гайдукевич, նշվ. աշխ., էջ 42։

[19] Е. М. Пещерова, Гончарное производство Средней Азии, М., 1959, էջ 125։

րանի շրջապատից հայտնաբերվեցին մեծ քանակությամբ անգորի կտորներ, թասերի ու ջրեղանների բեկորներ, որոնք նկարազարդված են կանաչ և դեղին ջնարակով։ Սրանք անգորը հեռացնելու և գծազարդման տեխնիկայով են արված։ Նման ոճը, ինչպես և ջնարակի պայծառ գույները բնորոշ են XII—XIII դդ.։ Այդ բեկորների մեջ առանձնանում է ջնարակած թասի մասը, որի վրա հայերեն Այ տառերն են կարդացվում։ Պետք է ենթադրել, որ այն կամ վարպետի պատվիրատուի անվան կամ, պարզապես, աստված բառի հապավումը պետք է լինի։ Պեղավայրում գտնվեցին նաև լայնափոր կճուճներ, սափորներ (թերի)՝ մեկ կամ երկու կանթով։ Հայտնաբերվեցին կարասի բեկորներ, որոնց գոտիները, ինչպես և սափորների և կճուճների պսակները, ցորենի հասկ հիշեցնող, ալիքավոր, ակոսավոր և տարբեր ձևերով են նկարազարդված (աղ. II, 1)։ Այստեղ էլ նույն XII—XIII դդ. բնորոշ գծազարդման ու փորագրման տեխնիկան է, որը հայտնի է դեռևս IX—X դդ.։ Պեղման ընթացքում դուրս եկան կանաչ գույնի երկու ձիթաճրագ և երկու կլոր աղաման (աղ. I, 5, II, 3)։ Բավականին շատ են մետաղե իրերը։ Դրանք երկաթե գամեր են (աղ. II, 2), դանակի շեղբեր, պայտեր և աշխատանքային գործիքներ, որոնք, սակայն, չափազանց քայքայված են։ Վառարանի շրջապատից հայտնաբերվեց մեծ քանակությամբ մետաղե թափոն։ Հնագիտական այս հավաքածոն պղնձե դրամների հետ միասին թվագրվում է XII—XIII դդ., որը և հիմք է տալիս նույն ժամանակին վերագրելու և վառարանը։ Ստորին բերդում բացված հնոցն առայժմ միակն է բոլոր այն հնոցներից, որոնք եղել են Դվինում։ Իսկ որ դրանք եղել են քաղաքում, հաստատվում են մեզ հասած բազմաքանակ արտադրական խոտանով, թրծման պարագաներով և ճաշակով նկարազարդված տեղական խեցեղենով։

Այսպիսով, պեղված նյութերը հնարավորություն են տալիս հավաստելու, որ Դվինում եղել են խեցեղեն թրծելու XII—XIII դդ. վառարաններ, որոնք որակական փոփոխություններ են մտցրել բրուտագործության մեջ։ Բացված կառույցի և պեղածո նյութերի քննությունը կասկած չի թողնում, որ մենք գործ ունենք նույն դարերի խեցեգործական ոչ մեծ մասշտաբի արտադրության արհեստանոցի և հնոցի հետ, որտեղ թրծվել է ժամանակի համար ամենասովորական և միևնույն ժամանակ ամենասասսայական ջնարակած խեցեղենը։

Ֆ. Ս. ԲԱԲԱՅԱՆ

ՍԻՍԻԱՆԻ ԱՐԾԱԹՅԱ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՍԵՐՆ ՈՒ ՍԿԱՀԱԿՆԵՐԸ

Հայաստանը մետաղամշակության հնագույն բնօրաններից մեկն է, այստեղ մետաղի գեղարվեստական մշակումը գալիս է դարերի խորքից։ Մինչև վերջին տարիները, Հայաստանի հելլենիստական դարաշրջանի տորևտիկան գրեթե անհայտ էր։ Գառնիում, Արտաշատում, Սիսիանում և այլ վայրերում կատարված պեղումների և պատահաբար հայտնաբերված մետաղյա մի շարք գեղարվեստական իրերի շնորհիվ հնարավոր դարձավ ծանոթանալ անտիկ շրջանի տորևտիկայի հետ։

Գեղարվեստական մետաղի մեջ իրենց ուրույն տեղն ունեն Սիսիանից հայտնաբերված արծաթյա թասերն ու սկահակները։ Թասերը, որոնցից երեքը համեմատաբար լավ են պահպանվել, չափերով իրարից քիչ են տարբերվում (տր. 10—12,2 սմ, բարձր. 6,2—7 սմ, քաշը 405,15—415,30 գր.)։ Բոլորի պսակները դեպի ներս են լայնանում և կլորանում (աղ. I, 4—7, II, 1, 2, III, 3, 4)։ Թասերից երկուսի պսակը զարդարված է լայնքով հաջորդաբար տարված մեկ և երկու փորագիր գծերով (աղ. I, 4)։ Թասերից մեկն առանձնանում է իր շքեղ հարդարանքով (տր. 11,8 սմ, բարձր. 6,2 սմ, քաշը 405,15 գր.)։ Նրա արտաքին մակերեսը բաժանված է ութ հավասար մասերի, որոնցից չորսը բաղկացած են ուղղահայաց առևակոսներից (յոթ հատ)։ Մյուս չորսը հարդարված են սուր երկարավուն, հավանաբար, նետաբույսի (Sagittaria) տերևներով և վերջիններիս երկու կողքերին տեղադրված քիչ ոճավորված խաղողի վազերով։ Պատկերը վերևից շրջափակված է կետերից կազմված, երկու զուգահեռ գոտիների մեջ վերցված պարանահյուսով, իսկ ներքևում՝ հատակն ընդգծող համակենտրոն երեք շրջանով (աղ. II, 1, 2)։

Բոլոր թասերը պատրաստված են ձուլելու եղանակով, իսկ զարդերն արված են փորագրելու և դրվագելու միջոցով։ Աշխատանքը կատարված է բավական խնամքով։ Տրված են բուսական զարդերի բոլոր մանրամասները, նույնիսկ տերևների միջնաջիղերն ու երակները։